ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

31 հոկտեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

153
(2819)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԽԱՂԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ ՀԱՏԵԼ Է 5 ՏՐԻԼԻՈՆԻ ՇԵՄԸ

Պարբերաբար ՀՀ ԱԺ-ում լսում ենք ինչ-որ օրենքների նախագծերի մասին, որոնք, իբրեւ թե, վերաբերում են խաղամոլությանը ու դրա դեմ պայքարին, սակայն ոլորտում իրավիճակը գնալով ավելի մտահոգիչ է դառնում: Ամենավերջինը ՔՊ-ական պատգամավորներ Հասմիկ Հակոբյանի ու Գեւորգ Պապոյանի՝ ««Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» եւ ««Վիճակախաղերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթն էր, որը ՔՊ-ի կողմից դրական եզրակացություն ստացավ: Նախագիծն էլ իրենից ենթադրում էր, որ եթե մինչ այս օրենքը թույլ էր տալիս խաղացողներին իրենց խաղային հաշվին կցել այլ բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվ եւ դրա միջոցով խաղադրույքներ կատարել ոչ միայն իրենց պատկանող միջոցներից, այլեւ ցանկացած այլ անձի պատկանող հաշիվների միջոցով, այդ թվում՝ իր ընտանիքի անդամների կամ երրորդ անձանց միջոցով, նախագիծն ընդունվելու դեպքում ամեն մարդ իր բաժին խաղադրույքի ու գույքի, գումարի տերն է լինելու: Կարճ ասած՝ յուրաքանչյուր խաղացող պիտի կատարի խաղադրույք միայն իր խաղային հաշվից եւ իրեն պատկանող հաշվի միջոցներից: Իհարկե, գուցե լավ նախագիծ է, բայց այսպիսիք շատ են ընդունվել ՀՀ ԱԺ-ի կողմից. թղթի վրա խաղամոլությանը վերաբերող «թիթեռ են նկարել», իսկ իրական կյանքում Հայաստանում խաղամոլների թիվն աճել է հեղափոխական իշխանության տարիներին հեղափոխական տեմպերով: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր. «2017թ.-ին 138,5 մլրդ դրամի խաղադրույք է կատարվել Հայաստանում, 2018թ.-ին այդ թիվն աճել է՝դառնալով 333,6 մլրդ դրամ, 2019թ.-ին հատել է 1 տրիլիոնի շեմը, 2020թ.-ին՝մոտ 2 տրլն դրամ, 2021-ի ամբողջ տարում 3,9 տրլն դրամից ավելի խաղադրույք է կատարվել: 2022թ.-ի հունվարից նոյեմբեր՝9 ամիսներին, 5,3 տրլն դրամի խաղադրույք է կատարվել Հայաստանում»: Նկատենք նաեւ, որ ՔՊ-ն, մի կողմից, խաղատնային գովազդները արգելող օրենքներ է ընդունում, մյուս կողմից՝ իշխանության սիրելի եւ հովանավորյալ Vivaro ընկերությունը մարդկանց գրավում է հրապուրիչ արտաքինով կանանց մասնակցությամբ գովազդներով, հայտնիների մասնակցությամբ խաղարկային հոլովակներով եւ այլն: VBet բուքմեյքերական ընկերության սեփականատերեր Վահե եւ Վիգեն Բաղալյանները, որոնք իշխանության սիրելի անձանցից են (ավելին՝ Վիգեն Բաղալյանի անունը կապվում է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հետ, որը դեռ 2018 թվականին հայտարարեց, որ Vivaro-ի տեր Վիգեն Բաղալյանն իր ընկերն է) անթաքույց շարունակում են իրենց գովազդային արշավները: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց այս խայտառակ վիճակագրության առիթով կապ հաստատել Vivaro ընկերության հետ՝ պարզելու, թե ինչպես են մեկնաբանում վերը նշված փաստերը, սակայն ապարդյուն:

ԱԺ պատգամավոր Արփի Դավոյանը, որն աչքի է ընկնում ուժային կառույցների ղեկավարների նկատմամբ հատուկ ուշադրությամբ, իրականում իր լուրջ պատճառներն ունի: «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել ՀՀ քննչական կոմիտե հետեւյալ բովանդակությամբ. «Հարգելի՛ պարոն Քյարամյան, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկություններ ունի՝առ այն, որ 2018 թվականին ՀՀ ՊԵԿ քննչական վարչությունում քննվել է մի գործ, որով անցել է Արփի Դավոյանը: Նախնական տեղեկություններով՝նա ՍՊԸ-ներ է հիմնադրել, ինչ-որ ներկրումներ արել, ապա խաբել պետությանը: Նա 2018 թվականի ապրիլից հետո ՊԵԿ քննչականում անգամ հարցաքննվել է: Հաշվի առնելով այդ իրողությունը, համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում եմ տեղեկացնել. 1. Ի՞նչ գործ է եղել հարուցված, որով անցել է Արփի Դավոյանը: 2. Ի՞նչ կարգավիճակ է նա ունեցել քրեական գործով: 3. Եթե քրեական գործ հարուցված չի եղել, ի՞նչ քննություն է տարվել: 4. Ի՞նչ փաստական հանգամանքներ են պարզվել Արփի Դավոյանի գործունեության մասով»: ՀՀ քննչական կոմիտեից, ի պատասխան մեր գրության, ստացել ենք աղքատիկ տեղեկություններ. «ՀՀ ՊԵԿ քննչական վարույթում քննված քրեական վարույթով Արփիկնե Դավոյանը հարցաքննվել է որպես վկա:

Շարունակությունը՝ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար անդրադարձել է, որ ԱԺ մեքենաների վերանորոգումն իրականացնում է «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն, որը նաեւ ոստիկանության եւ ՊՆ մատակարարներից է: Այս ընկերությունը եւ մի շարք այլ ընկերություններ ժամանակին Հակոբյան եղբայրների համատեղ սեփականությունն էին. ԱԺ նախկին պատգամավոր Վերսանդիկ Հակոբյանի մահից հետո անցել են եղբոր՝Հրայր Հակոբյանի տնօրինությանը: Դատական տեղեկատվական հարթակից տեղեկացանք, որ Արմեն Հակոբյանն իր հանգուցյալ հայրիկի՝Վերսանդիկ Հակոբյանի ներդրումները ստանալու նպատակով դիմում է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան՝«Գարանտսերվիս» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջով: Դատարանը «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումը ընդունել է վարույթ: «Ժողովուրդ» օրաթերթը գործի մանրամասներին ծանոթանալու նպատակով կապ հաստատեց Արմեն Հակոբյանի հետ, որն ասաց, որ Հրայր Հակոբյանը խուսափում է իր եղբոր իրավահաջորդներին պարտքերը վճարելուց՝ չտրամադրելով համապատասխան փաստաթղթերն ու հաշվետվությունը, ինչի հետեւանքով ինքն ու եղբայրը հարցին լուծում տալու այլ տարբերակ չեն տեսել եւ դիմել են դատարան: Արմեն Հակոբյանը հավելեց նաեւ, որ «Սպիտակ Դելֆին», «Բեստտուր», «Ֆրաս Պարկ», «Շամպայն գինիների գործարան», «Գարանտսերվիս», Ֆրանսիայի Հանրապետությունում, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնությունում գտնվող ընկերությունները Վերսանդիկ Հակոբյանին պարտք են շուրջ 3.000.000 ԱՄՆ դոլար փոխառության գումար: Ա. Հակոբյանը մտավախություն ունի, որ Հրայր Հակոբյանը ցանկանում է յուրացնել կամ կեղծ սնանկության հատկանիշներ ստեղծել այդ ընկերություններում, որպեսզի խուսափի պարտքը վճարելուց:

Շարունակությունը՝ArmLur.am կայքում:

Դեռեւս պատերազմի շրջանում օնլայն խանութների շարքում հայտնվեց «Վայլդբերրիզ» հարթակը, որը ավելի ուշ հասավ Հայաստան եւ գրավեց մի շարք տնտեսվարողների եւ գնորդների սրտերը: Մի կողմից՝տնտեսվարողներն էին կարողանում իրենց ապրանքը դուրս բերել միջազգային շուկա՝ ընդլայնելով տարածվածությունը, մյուս կողմից՝գնորդները կարողանում էին ձեռք բերել ապրանքներ ավելի մատչելի տարբերակով: Հայաստանյան մի շարք ընկերություններ եւս մուտք գործեցին օնլայն այս հարթակ՝ներկայացնելով իրենց ապրանքները: Մուտք գործողներից մեկը հայկական արտադրության Sali բրենդն էր: Բրենդի՝«Վայլբերրիզ» մուտք գործելուց հետո բավականին տհաճ բան ստացվեց: Մի շարք ապրանքներ (կից՝նկարները), փաստորեն, Հայաստանի Sali խանութի մասնաճյուղերում անասելի թանկ են, իսկ «Վայլբերրիզ» հարթակում գրեթե կես գին կամ, լավագույն դեպքում, մոտ տասը հազար դրամի տարբերությամբ: Ստացվում է՝հայաստանյան գնորդի համար ճոխություն համարվող կոշիկները օտարերկրացի գնորդների համար էժան են: Այսինքն՝ հայաստանցի գնորդը «Վայլբերրիզ»-ից ավելի մատչելի տարբերակով կարող է ձեռք բերել, քան հենց Sali խանութների ցանցից: Հարց է առաջանում՝ինչո՞ւ է այսպես վարվում հայկական այս ընկերությունն իր սպառողի հետ: Գուցե, ինչպես հայկական ասացվածքն է ասում, հեռու տեղի ձայնը քաղցր է: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Sali ընկերության հետ, սակայն նրանց կայքում եղած որեւէ հեռախոսահամարից արձագանք չեղավ, բնականաբար, հարցերն էլ մնացին առանց մեկնաբանության:



ԶՐՈՒՅՑ

ԹՈՒՐՔԱԳԵՏՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ Է ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն երեկ՝ ԱԺ-ում պետբյուջեի քննարկման ժամանակ, հայտարարեց, թե Հայաստանի Հանրապետությունը Թուրքիայի հետ սահմանի բացման շուրջ պայմանավորվածությունների իրականացման հույս ունի:

«Ուզում եմ հույս հայտնել, որ ձեռք բերված պայմանավորվածություններն առաջիկայում կիրագործվեն հատուկ ներկայացուցիչների քննարկումների, բանակցությունների արդյունքում: Դա վերաբերում է հետեւյալին. Հայաստան-Թուրքիա սահմանն այս փուլում բացվում է երրորդ երկրների քաղաքացիների եւ դիվանագիտական անձնագրեր ունեցողների համար»,- հայտարարել էր Նիկոլ Փաշինյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով զրուցել է թուրքագետ Ռուբեն Մելքոնյանի հետ:

-Պարոն Մելքոնյան, ի՞նչ հույսի մասին էր խոսում Նիկոլ Փաշինյանը, այս իրավիճակում նախադրյալներ տեսնո՞ւմ եք հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար:

-Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման եւ սահմանների բացման ճանապարհին անցնում է լիովին փոփոխված Հայաստանի միջով, այսինքն՝ այն Հայաստանը, որը հավատարիմ է իր սկզբունքներին, իր պատմությանը, արժեհամակարգին, չի գնում որեւէ զիջման եւ պաշտպանում էր Արցախը, այդ Հայաստանը հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու շանս չուներ, իսկ այն Հայաստանը, որը հրաժարվել է Արցախից եւ ընդունում է Թուրքիայի նախապայմանները, իհարկե, կարող է Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու շանսեր ունենալ:

Այսինքն՝ Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելը ինքնանպատակ է, որի ճանապարհին զոհաբերվում են բազմաթիվ ազգային եւ պետական հանգամանքներ, արժեքներ: Եթե գնում ենք այս ճանապարհով, ապա կարող ենք ենթադրել, որ թուրքական բազմաթիվ նախապայմաններ բավարարելու դեպքում կարող է լինել նման հեռանկար, բայց արդյոք դրանից հետո մենք կարո՞ղ ենք խոսել ինքնիշխան եւ հայկական պետության մասին:

-Դուք թուրքական կողմի մոտ ազդակներ տեսնո՞ւմ եք, որ նրանք անկեղծ ցանկություն ունեն Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու, թե՞ պարզապես կեղծ հայտարարություններ են անում:

-Թուրքիայի մոտ երբեք անկեղծ միտում չի եղել հարաբերություններ կարգավորել այնպիսի Հայաստանի հետ, որը հավատարիմ է իր սկզբունքներին: Թուրքիայում միշտ եղել է ցանկություն տեսնել ֆիզիկապես, բարոյապես, ռազմապես եւ հոգեպես ճնշված Հայաստան եւ թելադրողի հարաբերություններ ունենալ Հայաստանի հետ, ոչ թե հավասարը հավասարի: Հայաստանում կան որոշ շրջանակներ, որոնք իրենց համարում են պրագմատիկ եւ կարծում են, թե Թուրքիայի հետ անպայման պետք է գնալ հարաբերությունների հաստատման. սա շանտաժ է: Թուրքիայի հետ հարաբերություններ կարգավորելուն բոլորս էլ կողմ ենք, բայց դա իրատեսական չէ: Թուրքիայում անկեղծ ցանկություն չկա, չի եղել եւ չի լինի հարաբերություն հաստատել իսկապես ինքնիշխան եւ իր արժեհամակարգին հավատարիմ Հայաստանի հետ, իսկ այլափոխված Հայաստանի հետ, որը կդառնա տարածաշրջանում ոչ կարեւոր պետություն, իհարկե, ձեռնտու է հարաբերություններ հաստատել: Կարծում եմ՝ դեռ մի շարք նախապայմաններ կան, որոնք Թուրքիան անպայման ներկայացնելու է Հայաստանին:

-Ի՞նչ նոր նախապայմաններ է առաջ քաշելու:

-Օրինակ՝ սկսած զինանշանից, վերջացրած անկախության հռչակագիր, ցեղասպանությունից հրաժարում եւ բազմաթիվ այլ նախապայմաններ: Եթե թվում է, թե Արցախից հրաժարվելով՝ կարողանալու են Թուրքիայի քաղաքական ախորժակը զսպել, ապա սխալվում են, քանի որ թուրքական նախապայմանները չունեն սահմաններ եւ կարող են հասնել ընդհուպ մինչ մեր տեղանուններ, կարող են պահանջել անվանափոխել այնպիսի տեղանուններ, որոնք ասոցացվում են պատմական Հայաստանի հետ:

-Պարոն Մելքոնյան, ըստ Ձեզ՝ Հայաստանի իշխանություններն ամեն գնով կգնա՞ն Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման, թե՞ կան որոշ կարմիր գծեր:

-Ես այս իշխանությունների պարագայում չեմ տեսնում կարմիր գծեր, Թուրքիայի հետ կապված հարցերում նրանք երբեւէ ո՛չ հայտարարությունների, ո՛չ էլ քայլերի մակարդակով չեն ակնարկել, որ ունեն կարմիր գծեր: Իրենք ինքնանպատակ փորձում են հարաբերություններ հաստատել: Չեմ տեսնում ընդգծված կարմիր գծեր, որոնք կզսպեն Թուրքիային:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ԵՆ

ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐ՝ ՀՌՉԱԿԱԳՐՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ փորձագետների խումբը հայտարարություն է տարածել Ալմա-Աթայի հռչակագրի խեղաթյուրումների եւ իրավական կամայականությունների հետեւանքների մասին:

«Սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի զինված ուժերը լայնածավալ ագրեսիայի ընթացքում հրետանու եւ ԱԹՍ-ների կիրառմամբ սկսել են զանգվածային հրետակոծել Ստեփանակերտը եւ Լեռնային Ղարաբաղի այլ քաղաքներ: Ռազմական գործողությունների հետագա էսկալացիան կանխելու եւ խաղաղ բնակչության կյանքը փրկելու համար Արցախի Հանրապետության նախագահը ստիպված է եղել կատարել Ադրբեջանի վերջնագրային պահանջը եւ անօրինական հրամանագիր ստորագրել 2024թ. հունվարի 1-ից Արցախի Հանրապետության գոյությունը դադարեցնելու մասին:

Սա դարձավ 2020թ. Ադրբեջանի ագրեսիայից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության դեմ 2020թ. նոյեմբերի 9-ին կնքված Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների եռակողմ հայտարարության հրադադարի պայմանների իրականացման եռամյա գործընթացների գլխավոր արդյունքներից մեկը:

Այս հրամանագրին նախորդած՝ Ադրբեջանի գործողությունները՝ 2020թ. 44-օրյա պատերազմը, ԼՂՀ-ն արտաքին աշխարհին կապող բոլոր տրանսպորտային հաղորդակցությունների 280-օրյա շրջափակումը, 2023թ. սեպտեմբերի 19-ի ռազմական ագրեսիան, որոնք ուղեկցվել են բռնություններով, խաղաղ բնակչության, այդ թվում՝ երեխաների եւ տարեցների սպանություններով, վանդալիզմի գործողություններով, վկայում են այն կանխամտածված արարքների մասին, որոնց նպատակը հազարամյակներ շարունակ իրենց հայրենի հողում ապրող հայերին վտարելն ու ցեղասպանությունն էր: Այսօր ԼՂՀ-ն լքել է ողջ մնացած գրեթե ամբողջ բնակչությունը:

Տեղի ունեցածը բնութագրում է նաեւ բանակցային գործընթացների արդյունքները, որոնք տեղի են ունեցել հակամարտող կողմերի միջեւ մոսկովյան, վաշինգտոնյան եւ բրյուսելյան հարթակներում եւ ուղեկցվել են ղարաբաղահայության իրավունքների եւ անվտանգության պաշտպանության լավատեսական հայտարարություններով ու կոչերով: Ադրբեջանի հանցավոր արարքների դեմ եւ Ղարաբաղի հայերի ցեղասպանությունը կանխելու համար չեն կիրառվել ՄԱԿ-ի անդամ պետությունների միջազգային պարտավորություններով նախատեսված միջոցներ: ՄԱԿ անվտանգության խորհուրդը, արտահերթ նիստում քննարկելով Լեռնային Ղարաբաղում հումանիտար աղետի հարցը, սահմանափակվել է զսպվածության եւ մարդու իրավունքների պահպանման կոչերով, որոնք ուղղված են եւ՛ ագրեսորին, եւ՛ դրա զոհին:

Նյութն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում

ԱՐՑԱԽԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑ

Արցախի ժողովուրդը, 1991 թվականի հանրաքվեով հռչակելով Արցախը անկախ պետություն, ընտրել է իր կարգավիճակը՝ Ադրբեջանի իշխանությունից, իրավասությունից եւ տարածքային ամբողջականությունից դուրս: Արցախի կարգավիճակի հստակեցման եւ արցախահայության ինքնորոշման հարցը մշտապես եղել է ԼՂ հարցի կարգավորման բանակցային գործընթացի առանցքը, որի շուրջ ծավալվել է բանակցային երկխոսությունը: 2020թ.-ի 44-օրյա պատերազմից հետո, սակայն, բանակցային գործընթացը գլխիվայր շրջվեց. ինքնորոշման հարցը ետին պլան մղելով՝ ՀՀ իշխանությունները բանակցությունների հիմնական առարկա հռչակեցին արցախահայերի անվտանգության հարցը: Ի վերջո, Նիկոլ Փաշինյանի՝ զրոյական կետից մեկնարկի անորոշ ու ձախողված արտաքին քաղաքականությունը հասցրել է նրան, որ այսօր՝ պատմության մեջ առաջին անգամ, ունենք ամբողջովին հայաթափված Արցախ: Այն, որ Հայաստանի իշխանություններն այլեւս փակված են համարում Արցախի էջը, եւ նրանցից արցախամետ որեւէ քայլ սպասելը միամտություն կլինի, ակնհայտ է, իսկ թե ինչու են լռում սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայից հետո ՀՀ տեղափոխված արցախցի պատգամավորները եւ պաշտոնյաները, թերեւս որեւէ բացատրություն չունի: «Ժողովուրդ» օրաթերթը Արցախի ԱԺ դաշնակցական պատգամավոր Վահրամ Բալայանից հետաքրքրվել է՝ ինչու Արցախի պատգամավորներն այստեղ արտահերթ նիստ չեն հրավիրում եւ Արցախի ինքնորոշման հարց չեն բարձրացնում: Արցախցի պատգամավորը, մեր հարցին պատասխանելով, ասաց, որ ժամանակը կգա, դա էլ կլինի, մինչ այդ դեռ շատ գործեր կան. «Մենակ արտահերթ նիստ հրավիրելով ու դրանով բավարարվելով չէ, պետք է աշխատանք կատարել վաղվա համար, ինչ-որ պայմաններ ու հեռանկարներ ստեղծել: Սրանք իմ պատկերացումներն են, ես չեմ ասում՝ աշխատանքի արդյունքում ինչ-որ բանի միանգամից կհասնես, բայց ժամանակի ընթացքում տեւական աշխատանքն արդյունք տալիս է: Արտահերթ նիստ հրավիրելը հեշտ է, բայց միայն դա չէ. պատկերացրե՛ք՝ նիստ հրավիրեցինք, հայտարարություն տարածեցինք ու գնացինք տներով. այդպես չի լինի: Պետք է ծրագրված քայլերով աշխատանք տարվի, չպետք է նիստ անենք, լրագրողները գրեն դրա մասին ու վերջ. սիստեմատիկ քայլեր են պետք»:

Հետաքրքրվեցինք նաեւ՝ դիմել են արդյոք Արցախի՝ ապօրինի գերեվարման մեջ գտնվող ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանի տեղակալ Գագիկ Բաղունցին արտահերթ նիստ հրավիրելու համար: Բալայանն ասաց, որ զրուցել է նրա հետ, բայց արտահերթ նիստի հարց չի քննարկվել: Թե ինչու են հապաղում արցախցի պատգամավորները, անհասկանալի է, բայց այն, որ ժամանակը միայն ու միայն մեր դեմ է աշխատում, պարզ է:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Ադրբեջանը պնդում է, որ Հայաստանի հետ պետք է կնքվի խաղաղության համաձայնագիր: Այս մասին «Ազերթաջ»-ի հետ զրույցում ասել է Ադրբեջանի փոխարտգործնախարար Էլնուր Մամեդովը:

Մամեդովի խոսքով՝ «2021 թվականի փետրվարին Ադրբեջանը պաշտոնական առաջարկ է ուղարկել Հայաստանին՝ ստորագրելու համապարփակ խաղաղության պայմանագիր: Ցավոք, հայկական կողմը մոտ մեկ տարի չէր արձագանքում այս առաջարկին: Բացի այդ, Ադրբեջանը հայկական կողմին առաջարկ է ուղարկել խաղաղության պայմանագրի հինգ հիմնարար սկզբունքների վերաբերյալ, որոնց մասին առաջին անգամ նշվել է 2022 թվականի փետրվարին: Այս մասին տեղեկացվել են նաեւ միջազգային հանրությունը, երրորդ երկրներն ու այս գործընթացին աջակցող կողմերը»:

«Մոտ մեկուկես տարի Հայաստանն ընդհանրապես չէր արձագանքում այս առաջարկին: Եթե նայենք անցած տարվան, ապա խաղաղության բանակցություններ են տեղի ունեցել մի քանի հարթակներում, մյուս կողմին ներկայացվել են կոնկրետ եւ մանրամասն առաջարկներ ապագա խաղաղության պայմանագրի պայմանների վերաբերյալ: Հայաստանը նույնպես Ադրբեջանին է ներկայացրել իր մեկնաբանություններն ու դիրքորոշումը»,- ասել է Մամեդովը:

Ադրբեջանի փոխարտգործնախարարն ընդգծել է, որ Ադրբեջանը պնդում է խաղաղության համաձայնագրի ստորագրումը: «Խաղաղության համաձայնագրի՝ Ադրբեջանի առաջարկն այսօր ուժի մեջ է, ուստի Հայաստանը նախ պետք է կատարի հաջորդ քայլերը: Մինչ օրս խաղաղության պայմանագրի կետերի մեծ մասը համաձայնեցվել է կողմերի կողմից: Մենք կարծում ենք, որ այն բանից հետո, երբ ադրբեջանական պետությունը լիովին վերականգնեց ինքնիշխանությունը Ղարաբաղում իր միջազգայնորեն ճանաչված տարածքների նկատմամբ, խաղաղ համաձայնագրի ձեռք բերման գործընթացը հեշտացել է, եւ դրա ստորագրման հավանականությունը պետք է մեծ լինի»,- եզրափակել է դիվանագետը՝նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի դեմ ագրեսիան, որ իրականացվել է սեպտեմբերին:

ՊԱՐՔԱԲԱՆՈՒՄ

ԴԵԿԱՆՆ ԱՆՀԻՄՆ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԱՑԵԼ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի դեկան Տիգրան Սիմոնյանն ուսանողների ձայնը լսելի դարձնելու արդյունքում ստացել է երկու անհիմն նկատողություն եւ ներկա պահին կանգնած է աշխատանքը կորցնելու լուրջ վտանգի առաջ:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Տիգրան Սիմոնյանի հետ՝ հասկանալու համար, թե ինչ խնդիր է առաջացել իրականում, եւ որոնք են այդ անհիմն նկատողությունների պատճառները:

«Ես հանդիսանում եմ Մարզչամանկավարժական ֆակուլտետի դեկան, գիտությունների թեկնածու, դոցենտ եւ 1996 թվականից այս ինստիտուտում դասավանդում եմ եւ ոչ մի անգամ նույնիսկ բանավոր նկատողություն չեմ ստացել: Իսկ այս նկատողությունները հիմնականում կապված են այն հանգամանքի հետ, որ ես իմ գործընկերների հետ միասին անհամաձայնություն եմ հայտնել պարոն Խիթարյանի վարած քաղաքականությանը եւ ուսումնական պրոցեսի հետ կապված որոշ հարցերին նույնպես: Քանի որ պարոն Խիթարյանի նկատմամբ քրեական վարույթ էր հարուցվել, որը հետո կարճվեց, պարոն Խիթարյանը որոշեց գնալ արձակուրդ՝ իր փոխարեն նշանակելով Լուսինե Ստեփանյանին: Պետք է նշեմ, որ Մարզչամանկավարժական ֆակուլտետն ինստիտուտի ամենամեծ եւ հիմնական ֆակուլտետն է, եւ պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները առաջ են քաշել որոշակի պայմաններ ու պահանջներ՝ կապված ուսումնական պրոցեսի հետ, որոնք ես իրավունք չունեմ չբարձրաձայնելու: Առաջին նկատողությունը ես ստացել եմ հոկտեմբերի 20-ին, որից հետո փորձեցի հասկանալ, թե որն է պատճառը: Ինձ պատասխանեցին, որ ես չհիմնավորված հարց եմ զեկուցել գիտական խորհրդում, որը համարում եմ աբսուրդ, քանի որ անմիջական իմ ղեկավար հանդիսացող ուսումնական գծով պրոռեկտորն իմ հարցերը նախօրոք ստուգել է եւ առաջարկել, որ ընդգրկենք գիտական խորհրդում»:

Պարոն Սիմոնյանը նշեց, որ հարցը քննարկվելուց հետո որոշումը ընդունվել է՝ի օգուտ ուսանողների, եւ եթե անգամ ինքը համաձայն էլ չլիներ հնչեցրած հարցերին, այնուամենայնիվ, ի պաշտոնե պետք է ուսանողների եւ ֆակուլտետի խորհրդի նիստում կայացրած որոշումների մասին բարձրաձայներ: Գիտխորհրդի նիստից 4 օր անց ստացած նկատողությունից հետո պարոն Սիմոնյանը գրում է բացատրագիր, ըստ որի՝ ներկայացնում է, որ չհիմնավորված հարց չի հնչել, ներկայացվել է ուսանողների եւ ֆակուլտետի խորհրդի դիրքորոշումը: Պարոն Սիմոնյանի կողմից ներկայացված բացատրագիրը անհիմն են համարել:

«Հոկտեմբերի 23-ին ինձ ուղարկում են երկրորդ նկատողությունը, որը ես ստանում եմ այսօր: Պարզվում է, որ ինստիտուտի որոշ աշխատակիցներ ուղարկել են ինձ նամակ, որը ընկել է «Սպամ» պապկայի մեջ: Այն հարցին, թե ոնց է նամակը այդտեղ հայտնվել, ասացի, որ չեմ տեսել. ես այնքան էլ հիմար չեմ, որ նամակը բացեմ, տեսնեմ ու գցեմ նշված պապկայի մեջ: Հետո ինձ շատ էր հետաքրքրում՝ այդ ինչպես հասկացան, որ մտել եմ ու նայել տվյալ նամակագրությունը. արդյունքում պարզ դարձավ, որ, առանց իմ թույլտվության, անօրինական փորփրել են իմ էլեկտրոնային հասցեն: Սխալն իմն է, պետք է դիմեի համապատասխան մարմինների, ՀՀ օրենքի համաձայն՝հետեւյալ անձանց պատասխանատվության ենթարկեին՝ անօրինական, առանց անձի թույլտվության անձնական տվյալների ուսումնասիրման հետ կապված»,-պարզաբանեց պարոն Սիմոնյանը:

Տիգրան Սիմոնյանը կրկին ներկայացնում է բացատրագիր, որով նշում է, որ նամակն ինքը չի ուսումնասիրել եւ տեղյակ չէ, իսկ եթե լինում են պաշտոնական հաղորդագրություններ, հորդորել է ուղարկել, ինչպես կարգն է:

Պարոն Սիմոնյանի կողմից ներկայացված բացատրագիրը կրկին համարելով անհիմն՝տվել են խիստ նկատողություն:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՍՄԲԱՏՅԱՆՆ ԱՐԴԱՐԱՑՎԵՑ

Փաստաբան Երվանդ Վարոսյանը սոցցանցի իր էջում գրել է. «Մաեստրո Սերգեյ Սմբատյանն արդարացվեց:

ՀՀ գլխավոր դատախազության դատախազի որոշմամբ՝ դադարեցվել է Սերգեյ Սմբատյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը՝ մեղսագրվող արարքը նրա կողմից կատարված չլինելու հիմքով»:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մալթայում կայացել է ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի եւ Ուկրաինայի նախագահի աշխատակազմի ղեկավար Անդրեյ Երմակի հանդիպումը:

Զրուցակիցները քննարկել են Հայաստանի եւ Ուկրաինայի միջեւ երկկողմ հարաբերությունների ներկա վիճակը: Այս առումով նշվել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկիի առաջին հանդիպման կարեւորությունը, որը տեղի է ունեցել հոկտեմբերի 5-ին Գրանադայում Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջանակներում:

Անդրեյ Երմակը, մասնավորապես, շնորհակալություն է հայտնել սեպտեմբերի սկզբին Կիեւում կայացած Առաջին տիկնանց եւ պարոնների գագաթնաժողովին ՀՀ վարչապետի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի մասնակցության եւ ուկրաինացի դպրոցականների համար մարդասիրական օգնություն տրամադրելու համար: Նախագահի աշխատակազմի ղեկավարը հաստատել է ուկրաինական կողմի հանձնառությունը Հայաստանի հետ համագործակցության ամրապնդման հարցում, մասնավորապես՝ եվրահնտեգրման հարցերում:

Կողմերը շնորհավորել են միմյանց Ատոմային էներգիայի միջազգային գործակալության կառավարիչների խորհրդի կազմում Հայաստանի եւ Ուկրաինայի ընտրվելու կապակցությամբ եւ քննարկել են երկու երկրների փոխգործակցությունը այդ կազմակերպության շրջանակներում եւ էներգետիկայի ոլորտում:

ՍԼՈՎԵՆԻԱՅԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Սլովենիայի արտգործնախարարությունը X-ի իր միկրոբլոգում գրառում է կատարել, որում նշել է. «Բազմաթիվ հումանիտար ճգնաժամերի պայմաններում մենք օգնում ենք Լեռնային Ղարաբաղից փախստականներին: Անցյալ տարվա օգոստոսյան ջրհեղեղների ժամանակ Հայաստանն օգնություն առաջարկեց Սլովենիային, եւ այժմ Սլովենիան շնորհակալություն է հայտնում՝ ԿԽՄԿ-ի միջոցով 120.000 եվրո նվիրաբերելով Հայաստանին՝օգնելու ընդունել Լեռնային Ղարաբաղից փախստականներին»:

ԱՎԱՐՏՎԱԾ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ո՞Ր ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ ԿՔՆՆԵՆ ՊԵՄԶԱՇԵՆԻ ԴԵՊՔԸ

Ավարտվել է Շիրակի մարզի Պեմզաշեն բնակավայրի բնակչուհու եւ վերջինիս երկու երեխաների սպանության, 12 տարին չլրացած աղջիկ երեխայի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, ավազակություն կատարելու, իրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից կտրող-ծակող կամ կյանքից զրկելու կամ առողջությանը վնաս պատճառելու համար գործիք պատրաստելու, ձեռք բերելու, պահելու, կրելու դեպքերի առթիվ ինվող իրական վարույթի նախաքննությունը: Այն ինելու է դատավոր Արտուր Գաբրիելյանը:

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի եւ Անիի քննչական բաժնում իրականացված քննչական եւ ապացուցողական մեծածավալ, հետեւողական եւ համակողմանի գործողությունների արդյունքում պարզվել են դեպքերի բոլոր հանգամանքները:

Մասնավորապես, քննությամբ պարզվել է, որ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն բնակավայրի բնակիչ Ա.Բ.-ն, որը 2022թ. հոկտեմբերի 28-ին Ռուսաստանի Դաշնությունից ժամանել է Պեմզաշեն, նույն բնակավայրի բնակչուհի Զ.Մ.-ին իր հետ արտաամուսնական կապ ունենալու առաջարկություն է արել, սակայն վերջինս մերժել է:՝

Ա.Բ.-ն, որը մտերիմ հարաբերությունների մեջ է գտնվել Զ.Մ.-ի ամուսնու հետ, տեղեկացել է, որ կինը նպատակադրվել է այդ մասին տեղեկացնել ամուսնուն:

Մտավախություն ունենալով, որ վերջինս կիմանա իր անպարկեշտ առաջարկի մասին, քաջ գիտակցելով տվյալ տեղեկատվության բարձրաձայնման արդյունքում իրենց համայնքում իր հեղինակազրկումը, այդ ամենը թույլ չտալու եւ կանխելու նպատակով ընկերոջից, որը հանդիսանում է Զ.Մ.-ի ամուսնու հորեղբորորդին, ճշտումներ է կատարել Զ.Մ.-ի ամուսնու՝ ՀՀ վերադառնալու մոտավոր օրվա մասին եւ իր ազգական, նույն բնակավայրի բնակիչ Վ.Բ.-ի հետ հանդիպման ընթացքում, նախապես տեղեկացված լինելով վերջինիս սոցիալական վատ վիճակի մասին եւ օգտվելով այդ հանգամանքից, տեղեկացրել է նրան Զ.Մ.-ի տանը ենթադրաբար գումար լինելու, ինչպես նաեւ վերջինիս ամուսնու՝ ՀՀ վերադառնալու եւ, դրանով պայմանավորված, կնոջը լռեցնելու՝ սպանելու մասին:

Զ.Մ.-ի տուն ապօրինի մուտք գործելու եւ բռնության գործադրմամբ գումար հափշտակելու՝ ավազակություն կատարելու, ինչպես նաեւ նրան սպանելու հարցում Վ.Բ.-ն եւ Ա.Բ.-ն ձեռք են բերել համաձայնություն եւ դեպքի օրը՝ 2022 թվականի նոյեմբերի 9-ին՝ ժամը 00:00-ի սահմաններում, նախապես իրենց հետ վերցնելով փականը բացելու համար հարմարեցված առարկա (բանալի), հակավորման թել եւ ծալովի դանակ, ավտոմեքենայով շրջանցելով բնակավայրում տեղադրված տեսախցիկները, Զ.Մ.-ի տան մոտ սպասել են: Համոզվելով, որ տան լույսերը մարված են, նրանք բացել են տան բակի չկողպված դարպասի դուռը, որից հետո Ա.Բ.-ն հարմարեցված բանալիով բացել է նաեւ տան մուտքի դուռը՝ ապօրինի մուտք գործելով տուն:

Երբ միջանցքում Զ.Մ.-ն նկատել է նրանց, Ա.Բ.-ն բռունցքով հարվածել է կնոջ գլխին, եւ վերջինս, գիտակցությունը կորցնելով, ընկել է հատակին, որից հետո Վ.Բ.-ն եւ Ա.Բ.-ն շահադիտական նպատակով՝ իրենց կողմից կատարված ավազակությունը, Ա.Բ.-ի կողմից կնոջն անպարկեշտ առաջարկ անելու հանգամանքը թաքցնելու նպատակով, ապօրինաբար կյանքից զրկելու՝ սպանելու դիտավորությամբ, փոխլրացնելով միմյանց գործողությունները, դանակով հարվածներ են հասցրել Զ.Մ.-ի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով բազմաթիվ մարմնական վնասվածքներ:

Զ.Մ.-ի բղավոցներից միջանցք են եկել վերջինիս անչափահաս երեխաները՝ 07.12.2010թ. ծնված դուստրը եւ 12.06.2014 թվականին ծնված որդին: Տեսնելով երեխաներին՝ Վ.Բ.-ն եւ Ա.Բ.-ն հակավորման թելով նախ կապել են տղայի ոտքերը եւ ձեռքերը, ապա՝ աղջնակի ձեռքերը, ինչից հետո նաեւ կապել են Զ.Մ.-ի ձեռքերը եւ վերջինիս քարշ տալով՝ տեղափոխել են ննջասենյակ: Այնտեղ երեխաների ներկայությամբ, հաշվի առնելով Զ.Մ.-ի ողջ լինելու հանգամանքը, առանձին դաժանությամբ շարունակել են դանակով հարվածներ հասցնել վերջինիս: Ընդհանուր առմամբ ստացած 11 մարմնական վնասվածքների հետեւանքով կինը մահացել է:

Վ.Բ.-ն եւ Ա.Բ.-ն, համոզված լինելով, որ անչափահաս տղա երեխան ճանաչել է իրենց, կատարվածը թաքցնելու նպատակով առանձին դաժանությամբ սպանելու՝ ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, դեռեւս չմահացած Զ.Մ.-ի եւ վերջինիս անչափահաս դստեր ներկայությամբ խմբով, միմյանց գործողությունները փոխլրացնելով, դանակով հարվածներ են հասցրել անօգնական՝ ոտքերը եւ ձեռքերը կապված վիճակում գտնվող տղա երեխայի մարմնի տարբեր հատվածներին, այդ թվում՝ կենսական նշանակություն ունեցող օրգաններին՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի կտրած-ծակած մարմնական վնասվածքներ՝ այդկերպ առանձին դաժանությամբ սպանելով անչափահաս երեխային:

Քննությամբ նաեւ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Վ.Բ.-ն, Զ.Մ.-ին եւ վերջինիս որդուն սպանելուց հետո, 12 տարին չլրացած աղջիկ երեխայի անօգնական վիճակն օգտագործելով, հագուրդ տալով իր սեռական ցանկություններին, սեռական հարաբերություն է ունեցել նրա հետ, որից հետո, համոզված լինելով, որ աղջնակը ճանաչել է իրենց, Վ.Բ.-ն եւ Ա.Բ.-ն իրենց կողմից կատարված հանցանքները թաքցնելու նպատակով դիտավորությամբ դանակով երկու հարված են հասցրել անչափահաս աղջնակի կրծքավանդակի եւ որովայնի շրջաններում՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի կտրած-ծակած թափանցող մարմնական վնասվածքներ՝ այդկերպ սպանելով երեխային:

Ավարտին հասնելով իրենց հրեշավոր մտադրությունները՝ ուրիշի գույքն ապօրինի ձեռք բերելու դիտավորությամբ կնոջ դիակի վրայից՝ պարանոցից ու մատից, ինչպես նաեւ ննջասենյակի պահարանից հափշտակել են ընդհանուր 940.000 ՀՀ դրամ արժողության ոսկյա շղթա, ոսկյա խաչ, երեք հատ ոսկյա մատանի, 5000 ՌԴ ռուբլի, 20 Եվրո եւ մոտ 60.000 ՀՀ դրամ գումար եւ հեռացել տանից:

Բացի այդ, Վ.Բ.-ն ԱՆ «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում գտնվելու ժամանակ ձեռք է բերել կտրող եւ կյանքից զրկելու ու առողջությանը վնաս պատճառելու համար նախատեսված ածելու շեղբ, ինչպես նաեւ կրակայրիչի երկաթյա մասից սուր եզր ունեցող առարկա, այն պահել է իր կացարանում գտնվող մահճակալի ոտնակի տակ, որն էլ հայտնաբերվել է քրեակատարողական հիմնարկի ծառայողների կողմից կատարված խուզարկության ժամանակ:

Ձեռք բերված փաստերը հիմնավորվել են նաեւ վարույթի շրջանակներում նշանակված բազմաթիվ փորձաքննություններով: Վ.Բ.-ի վերաբերյալ նշանակված ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ վերջինս ճանաչվել է մեղսունակ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Ա.Բ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 8-րդ, 10-րդ, 13-րդ կետերով, 155-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 13-րդ կետերով (2 դրվագ), եւ 252-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, իսկ Վ.Բ.-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 8-րդ, 10-րդ, 13-րդ կետերով, 155-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 13-րդ կետերով (2 դրվագ), 252-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 198-րդ հոդվածի 4-րդ մասով եւ 512-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու համար ուղարկվել են դատավարական հսկողություն իրականացնող դատախազին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՎԱՐԻՉԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

Նորք-Մարաշի գերեզմանատան վարիչը կալանավորվել է 4500 ԱՄՆ դոլար կաշառք ստանալու մեղադրանքով: «Ժողովուրդ» օրաթերթն այս մասին տեղեկանում է Հակակոռուպցիոն կոմիտեի տարածած հաղորդագրությունից:

«Փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Հ. Շ.-ն, զբաղեցնելով Երեւանի քաղաքապետարանի «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի Նորք-Մարաշ վարչական շրջանի գերեզմանատան վարիչի պաշտոնը, Վ. Կ.-ի օգտին իր իշխանական լիազորություններն օգտագործելով գործողություն կատարելու, այն է՝ վերջինիս ազգականին Նորք-Մարաշ գերեզմանատանը հուղարկավորելու եւ նախընտրելի տարածքում գերեզմանատեղի տրամադրելու համար, Վ. Կ.-ից 2023 թվականի հունիսի 22-ին պահանջել եւ ստացել է խոշոր չափերի՝ 2.500 ԱՄՆ դոլար կաշառք:

Բացի այդ, Հ. Շ.-ն մեկ այլ անձի՝ Գ. Ե.-ի ազգականին Նորք-Մարաշ գերեզմանատանը հուղարկավորելու եւ նախընտրելի տարածքում գերեզմանատեղի տրամադրելու համար, Գ. Ե.-ից 2023 թվականի հուլիսի 7-ին պահանջել է կաշառք, այնուհետեւ միջնորդ Ա. Կ.-ի միջոցով համաձայնության գալով կաշառքի առարկայի չափի շուրջ՝ նույն օրը Գ. Ե.-ից ստացել է 2000 ԱՄՆ դոլար»,- ասված է հաղորդագրության մեջ:

2023 թվականի հոկտեմբերի 27-ին Նորք-Մարաշ վարչական շրջանի գերեզմանատան վարիչ Հ. Շ.-ն, վերջինիս կաշառք տված Գ. Ե.-ն, Վ. Կ.-ն եւ կաշառքի միջնորդություն կատարած Ա. Կ.-ն ձերբակալվել են:

Խոշոր չափերով կաշառք ստանալու համար Հ. Շ.-ին մեղադրանք է ներկայացվել (2 դրվագ)՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Կաշառք տալու համար Գ. Ե.-ին ու Վ. Կ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, իսկ Ա. Կ.-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կաշառքի միջնորդության համար:

Գերեզմանատան վարիչի, ինչպես նաեւ վերջինիս կաշառք տված Գ. Ե.-ի եւ Վ. Կ.-ի նկատմամբ դատարանի որոշմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 27-ից 30-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 130 դեպք, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԽԱՂՈՂԱԳՈՐԾՆԵՐԻՆ ՉԵՆ ՎՃԱՐԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում է ուղարկել՝ պարզելու, թե Տավուշի մարզում խաղող վերամշակող ընկերություններն այս տարի ինչքան խաղող, ինչ գնով են մթերել, վճարել են արդյոք ընդունած խաղողի դիմաց: Մարզպետարանից պատասխանել են, որ այս տարի «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ Բերդի մասնաճյուղը կիլոգրամը 140 դրամով խաղողագործներից ընդունել է 2498 տոննա խաղող, «Իջեւանի գինու եւ կոնյակի գործարան» ԲԲԸ-ն կիլոգրամը 140-150 դրամով խաղողագործներից ընդունել է 323,4 տոննա խաղող, «Երեւանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ Դեբեդավանի գինու գործարանը կիլոգրամը 120 դրամով ընդունել է 565.4 տոննա, Կողբ գյուղում գործող «Կանաչ գյուղ» ՍՊԸ-ն կիլոգրամը 150-270 դրամով ընդունել է 94.3 տոննա բերք: Տավուշի մարզում ընդհանուր մթերվել է 3481.1 տոննա խաղող: Մարզպետարանից հայտնել են նաեւ, որ մթերված խաղողի դիմաց գումարներն ամբողջությամբ վճարել է «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ Բերդի մասնաճյուղը, մասամբ՝ «Կանաչ գյուղ ՍՊԸ»-ն: Այս տարի Տավուշի մարզում, կապված տեւական անձրեւների հետ, խաղողի բերքը քիչ է եղել, գործարաններն էլ քիչ խաղող են մթերել՝ ընդամենը 3481,1 տոննա: Իջեւանի գինու, կոնյակի գործարանը ավելի քան 3 տարի ապօրինի շինարարություն է կատարում Աղստեւ գետի հունում, ավերել է գետի հունը, ջրազրկել Իջեւանի դենդրոպարկը, կառուցել երկար, բարձր պատ, գետի հունը փոխելու հետեւանքով գրաված տարածքում ապօրինի կառուցել է կենդանիներ պահելու համար նախատեսված խցեր, որտեղ պահում են եղջերու, ջայլամ, հնդուհավ եւ այլ կենդանիներ: Իջեւանի գինու, կոնյակի գործարանը ապօրինի շինարարություն կատարելու համար գումարներ ունի, սակայն այս տարի մթերած 323 տոննա խաղողի դիմաց դեռեւս չի վճարել խաղողի այգետերերին:

ԱՋԱՏՎԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթը Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում է ուղարկել՝ հարցնելով, թե միջին մասնագիտական կրթություն ունենալու պատճառով Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում քանի զինղեկ է ազատվել աշխատանքից, փոխվել է արդյոք զինղեկների աշխատավարձի հաշվարկման կարգը, զինղեկների զինվորական կոչման համար հավելավճարի վճարումը երբ է չեղարկվել: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներից միջին մասնագիտական կրթություն ունենալու հիմքով աշխատանքից ազատվել է չորս զինղեկ: 2023-2024 ուսումնական տարում զինղեկների աշխատավարձի հաշվարկման ձեւը չի փոխվել, իսկ զինվորական կոչման համար դպրոցներում հավելավճարի չեղարկումը կատարվել է դեռեւս 2015 թվականին՝ ՀՀ վարչապետի՝ 2015 թվականի հոկտեմբերի 12-ի N 935-Ն որոշմամբ»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՀԱՋԱՆԳ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԿ-ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը ահազանգ է ստացել Ռ. Հարությունյանի անվան ԲԿ-ի մի քանի աշխատակիցներից, որ ոչ միայն խախտվում են աշխատակիցների աշխատանքային իրավունքները, այլեւ չեն պահպանվում Աշխատանքային օրենսգրքով եւ կառավարության որոշումներով հաստատված աշխատանքային պայմանները:

Աշխատակիցների դիմում-բողոքները ուղղված էին Աբովյանի Ռ. Հարությունյանի անվան ԲԿ-ի տնօրեն Վարդան Մանուկյանի եւ, ինչպես նշում են աշխատակիցները, իր աշխատելաոճի վրա աչք փակող՝ Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանի դեմ:

«Օրինական կարգով մրցույթ չի հայտարարվել, եւ Վարդան Մանուկյանը մոտ երկու տարի է՝ հանդիսանում է տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ստիպում է աշխատողներին կատարել տնային հերթապահություններ, որի համար աշխատակիցները չեն վճարվում: Կնքվել են բազմաթիվ իրավախախտումներով աշխատանքային պայմանագրեր, եւ ներկա պահին մի քանի աշխատակիցներ չեն ստացել աշխատավարձ, ինչի արդյունքում կուտակվել է բավականին մեծ գումար, եւ աշխատակիցներն այդ հարցը որոշել են լուծել դատական համակարգի միջոցով: Հիվանդանոցում առկա են մի շարք տեխնիկական խնդիրներ՝ կապված սարքավորումների հետ, ինչպես, օրինակ, ռենտգենաբանական կաբինետում օգտագործվում են ոչ սարքին ապարատներ, ֆլյուրոգրաֆիկ ապարատը ճառագայթվում է նորմայից ավելի, ինչը վնասում է թե՛ հետազոտվողին եւ թե՛ առավելապես աշխատողներին: Ռենտգենաբանական կաբինետներում չեն գործում օդափոխության համակարգերը, տարիներ շարունակ աշխատել են չլիցենզավորված անձինք»,- պատմում է աշխատակիցներից մեկը:

«Ժողովուրդ» օրաթերթը նախ փորձեց կապ հաստատել Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանի հետ՝ հասկանալու համար, թե ինչու ժամանակին մրցույթ չի հայտարարվել, եւ ինչու է նման իրավիճակ ստեղծվել Աբովյանի Ռ. Հարությունյանի անվան բժշկական կենտրոնում: Մեր հարցերին ի պատասխան՝ պարոն Ահարոնյանը պատասխանեց. «Եթե իրականում կան բողոքներ, այն էլ՝ նման բնույթի, անգամ դատական գործ կարելի է հարուցել: Ես տեղյակ եմ մեկ աշխատակցի հետ կապված խնդրի մասին եւ նաեւ գիտեմ, որ խնդիրը հասել է դատարան, ինչպես նաեւ տնօրենը բողոքարկել է տեսչական մարմնի որոշումը: Կարող են դիմել դատարան, թող դատարանը որոշի՝ աշխատակիցն է ճիշտ, թե տնօրենը, իսկ եթե տնօրենն է սխալ, ուրեմն պատասխանատվությունը կկրի տնօրենը: Տեխնիկական հագեցվածության մասին խոսելիս նախ պետք է նշեմ, որ մարզերում կա խնդիր, սակայն այնպիսի տեխնիկական հագեցվածություն, ինչպիսին Աբովյանի Ռ. Հարությունյանի անվան բժշկական կենտրոնում է, կարծում եմ՝ չկա: Դատարանի կողմից կայացրած վճռի ժամանակ նոր կհասկանանք՝ տնօրենն է ճիշտ, թե աշխատակիցը: Իսկ մրցույթ հայտարարելու եւ տնօրեն նշանակելու հետ կապված՝ պետք է նշեմ, որ ֆիքսված ժամանակ չկա, հետո տվյալ բժշկական կենտրոնում եղել են ստուգումներ, որի արդյունքում տվյալ ժամանակահատվածում նպատակահարմար չենք գտել մրցույթ հայտարարել: 2024 թվականի հունվարին կլինի նոր մրցույթ, որի ժամանակ էլ կորոշվի, թե ով կընտրվի տնօրեն»:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց նաեւ կապ հաստատել Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյան ԲԿ-ի տնօրեն Վարդան Մանուկյանի հետ՝ հասկանալու համար, թե ինչու է նման իրավիճակ ստեղծվել, եւ արդյոք ճիշտ են աշխատակիցների դիմում-բողոքները՝ ընդդեմ իրեն: Մանուկյանը, մեր հարցերին ի պատասխան, արձագանքեց. «Նման բնույթի մեղադրանքների մասին խոսելիս պետք է նշեմ, որ դատարկաբանություն եմ համարում նման խոսակցությունները: Մեկ աշխատակցի հետ կապված է խնդիր առաջացել, եւ ներկա պահին այս բժշկական հաստատությունը անցնում է հնարավոր բոլոր գործընթացների միջով բնականաբար օրենքի սահմանների շրջանակում: Մենք ունենք բազմաթիվ աշխատակիցներ, որոնք ստանում են իրենց աշխատավարձը ճիշտ ժամանակին: Մենք մեր աշխատողներին հարգում ենք եւ մի շարք կետեր հաշվի ենք առնում, ինչպես, օրինակ, գործում հմուտ լինելը, անգամ տարիների ունեցած փորձն ու վաստակը: Գուցե այն աշխատակիցը, որը բողոքել է, ցանկացել է արտաժամյա աշխատանքը ներկայացնել տնային հերթապահության ասվածի տակ, բայց նման բան չկա, քանի որ անգամ արտաժամյա աշխատանքի մասին խոսելիս անում ենք ամեն բան օրենքի սահմաններում, եւ առաջնայինը մեզ համար մեր բնակչի, հետազոտվողի առողջությունն է: Պետք է նշեմ, որ մեր հիմնարկն էլ իր գործելաոճն ունի»:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՒՄԱՐ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ կառավարության որոշմամբ՝ վերաբաշխում է կատարվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2023 թվականի բյուջեում՝ լրացուցիչ միջոցներ նախատեսելով մինչեւ 100 աշակերտ ունեցող գյուղական դպրոցների ուսուցիչների եւ ԲՏՃՄ (բացառությամբ մաթեմատիկական առարկաների) դասավանդողների համար լրավճարների տրամադրման համար: ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ այլ միջոցառումներից մնացած միջոցներից կվերաբաշխվի 215 մլն 354 հազար դրամ գումար:

Որոշվել է ՀՀ գյուղական բնակավայրերում մինչեւ 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի տրամադրման համար հատկացնել լրացուցիչ 115 մլն 285 հազար դրամ գումար, իսկ ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկայի) դասավանդող ուսուցիչների համար նախատեսված լրավճարի գումարն ավելացնել 100 մլն 69 հազար դրամով:

Հիմնավորման մեջ նշվում է, որ ՀՀ գյուղական բնակավայրերում մինչեւ 100 աշակերտ ունեցող պետական դպրոցների ուսուցիչներին հավելավճար տրամադրելու արդյունքում կհամալրվեն ուսուցիչների թափուր տեղերը՝ հաշվի առնելով, որ այդ դպրոցներում ուսուցիչները գրեթե 1 դրույք ծանրաբեռնվածություն չեն ունենում: Ակնկալվում է, որ ՀՀ գյուղական բնակավայրերում մինչեւ 100 աշակերտ ունեցող պետական դպրոցներում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի տրամադրումը կնպաստի ուսուցչի թափուր հաստիքների համալրմանը, դասավանդման որակի բարելավմանը, մանկավարժների վարձատրության բարելավմանը:

ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկայի) դասավանդող ուսուցիչների համար կսահմանվի վարձատրության հետեւյալ սկզբունքը.լրավճարի չափը հավասար կլինի տվյալ ուսուցչի դրույքաչափի (հաշվի առնելով նաեւ կամավոր ատեստավորման արդյունքում դրույքաչափի փոփոխությունը) 25 տոկոսին՝ չհաշվելով այլ հավելավճարները եւ լրավճարները:

Ակնկալվում է, որ նոր բարելավումը կնպաստի հանրապետությունում ԲՏՃՄ ոլորտի ուսուցիչների բացակայության խնդրի կարգավորմանը:

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 44 ՃՏՊ. 5 մարդ զոհվել է, 75-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2023թ. նոյեմբերի 23-ին, ժամը 12:00-ին Սեւակ Գալստյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի «Արդշինբանկ» ՓԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով երրորդ անձ Հարութ Գեւորգյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1. ՀՀ ք. Արագածոտնի մարզ, գ. Ձորագլխում գտնվող 381.0 քմ մակերեսով արտադրական նշանակության հողամասը:

Մեկնարկային գինը սահմանվում է 353,565 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով (բայց ոչ ավել 200,000 ՀՀ դրամից) մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Սեւակ Գալստյանի սնանկության հաշվին՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի «Նոր Արեշ» մասնաճյուղ 1150004558048023 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան /ք.Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝Ա. Էլոյանին / 094 411 487 /:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կրկնաճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2023թ. նոյեմբերի 23-ին, ժամը 12:30-ին պարտապան Ա/Ձ Վարդան Ավետիսյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի սեփականության իրավունքով Վարդան Ավետիսյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով, բաց դասական եղանակով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիսում գտնվող ավտոտնակը:

Մեկնարկային գինը սահմանվում է 555,189 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետակա գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.
-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Վարդան Ավետիսյանի սնանկության հաշվին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ 2472303816560000 հաշվեհամարին՝ մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝Ա. Էլոյանին / 094 411 487 /:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն «Բիէսթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Ժողովուրդ» օրաթերթի 24.10.2023թ. թիվ 149 (2815) համարի 6-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման», տեղեկացնում ենք, որ «Բի էս Թի» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված, «Հայինկասացիա» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Մ. Ստեփանյան փողոց, թիվ 3/1 հասցեում գտնվող անշարժ գույքի աճուրդային վաճառքն իրականացվելու է ստորեւ ներկայացված շարժական գույքի հետ միասին՝ որպես մեկ միասնական համալիր՝ 3473600 ՀՀ դրամ մեկնարկային գնով

-Չիրկիզվող պահարան (3 հատ), գրասեղան, երկաթյա պահարան, հոլովակավոր աթոռ, աթոռ (8 հատ):

Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.borsa.am կայք:

«Հրապարակային ծանուցման» մյուս դրույթները մնում են անփոփոխ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՊԱԿԱՍ ՎՃԱՐՎԱԾ ՄԱՔՍԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է 2023 թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով հետբացթողումային հսկողության վերաբերյալ տեղեկություն:

«Ապրանքների բացթողումից հետո՝ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության վարչության աշխատակիցների կողմից իրականացված մաքսային հսկողության ընթացքում, հայտնաբերվել են ՀՀ մաքսային օրենսդրության խախտման մի շարք դեպքեր, որոնց արդյունքում պակաս հաշվարկված եւ վճարված մաքսային վճարների եւ դրանց նկատմամբ օրենքով հաշվարկված տույժերի ընդհանուր գումարը կազմել է մոտ 220,729,678 ՀՀ դրամ: Տնտեսվարողների կողմից ապրանքների հայտարարագրերով «Բացթողում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձեւակերպվել եւ ՀՀ տարածք են ներմուծվել տարբեր տեսակի համակարգչային-խաղային մոնիթորներ, որոնք հայտարարագրվել են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8528 52 100 0 ծածկագրով (մաքսատուրքի դրույքաչափը՝0%, ԱԱՀ՝0%):

ԵՏՀ խորհրդի որոշումների համաձայն՝ նշված ապրանքային ստորաենթադիրքը նախատեսված է բացառապես կամ գլխավորապես 8471 ապրանքային դիրքի հաշվողական մեքենաներին անմիջապես միացող եւ դրանց հետ օգտագործվելու համար մշակված մոնիթորները, որոնք իրենց մեջ չեն ընդգրկում ընդունիչ հեռուստատեսային ապարատուրա:

Առաջնորդվելով ԱՏԳ ԱԱ մեկնաբանման հիմնական կանոններով՝ մաքսային մարմնի կողմից ընդունվել են նշված ապրանքատեսակների դասակարգման վերաբերյալ որոշումներ, որոնց համաձայն՝ապրանքատեսակները ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8528 52 100 0 ծածկագրի փոխարեն դասակարգվել են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8528 52 900 9 ծածկագրով (մաքսատուրքի դրույքաչափը՝5% ԱԱՀ՝0%): Ապրանքատեսակները նշված ծածկագրով դասակարգվել են, քանի որ հանդիսանում են գունավոր մոնիթորներ, որոնք նախատեսված են ինչպես միացված համակարգչից, այնպես էլ այլ սարքերից (օրինակ՝ խաղային վահանակներ, հեռուստատեսային ընդունիչ սարքեր, DVD նվագարկիչ եւ այլն) տեքստ, գրաֆիկական տեղեկատվություն, տեսաձայնային ազդանշաններ վերարտադրելու համար:

Ի թիվս այլ հատկանիշերի՝դրանք համալրված են եղել Display Port եւ/կամ HDMI ինտերֆեյսներով եւ չեն պարունակում հեռուստատեսային բարձրհաճախական ազդանշանների ընդունիչ սարքեր: Մեկ մաքսային ստուգում իրականացվել է արդեն իսկ հարուցված քրեական գործի շրջանակներում, որի արդյունքներով հաստատվել է, որ պետությանը պատճառված վնասը կազմում է 182,398,855 ՀՀ դրամ: 32 դեպքով մաքսային մարմին ներկայացված ապրանքների հայտարարագրերում հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

Նախնական տվյալներով՝ թերի վճարված մաքսային վճարների գումարը կազմում է 30 մլն դրամ:

Վերոնշյալ դեպքերով իրականացվում է վերլուծություն»,- ասված է ՊԵԿ-ի տարածած հաղորդագրության մեջ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթը հրապարակել էր անտուն ՔՊ-ականների ցանկը, որոնք, հեղափոխությունից հետո պաշտոն ստանալով, տներ են ձեռք բերել:

ՔՊ-ական անտուններից Սուրեն Գրիգորյանն էլ օրերս վերընտրվեց փոխքաղաքապետի պաշտոնում:

2018 թվականի հեղափոխությունից հետո՝դեկտեմբերի 9-ին, ընտրվել է Ազգային Ժողովի պատգամավոր «Իմ քայլը» կուսակցության դաշինքի համապետական ընտրական ցուցակով:

Այդ ընթացքում էլ Գրիգորյանը ոչ մի անշարժ գույք չի հայտարարագրել:

Նրա դրամական միջոցները 2019 թվականին ներկայացրած հայտարարագրում կազմել են 45 հազար դրամ: 2022 թվականի տարեկան հայտարարագրում նրա տարեկան եկամուտները կազմել են 12 մլն 749 հազար դրամ՝ 2019 թվականի համեմատ աճելով գրեթը 280 անգամ:

2023 թվականի նրա եկամուտներից 11 մլն 31 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է «Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկից, 423 հազարը՝ «Սիլ Ինշուրանս» ապահովագրական ընկերությունից, որը եղել է ապահովագրական հատկացում: Ըստ եկամուտների՝ գրեթե 1 մլն 294 հազար դրամ կազմում են Գրիգորյանի վարկերը, սակայն ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնում կազմել են 697 հազար դրամ:

Գրիգորյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2 մլն 249 հազար դրամ: Նա ոչ միայն տուն չունի, այլ նաեւ կանխիկ դրամ եւ տրանսպորտային միջոց:

Գրիգորյանը 12 միլիոն դրամ եկամուտ ունի, սակայն ոչ մի ծախս չի հայտարարագրել:

ՏՀԱՃ ԱՆԱԿՆԿԱԼ՝ Wilberries–ԻՑ

Wildberries-ը, փակելով ռուսական տարբերակով գնումներ կատարելու էժան եւ մատչելի տարբերակը, այժմ հայկական շուկայի գնորդների համար այլ անակնկալ է մատուցում:

Երեկվանից հայտնի դարձավ, որ հոկտեմբերի 30-ից Wildberries-ի ապրանքի ստացման կետերի անվճար պոլիէթիլենային տոպրակներն այլեւս անվճար չեն լինի: Ըստ օգտատերերի՝ստացած ծանուցումներից պարզ է դառնում, որ տոպրակներն այսուհետ կլինեն վճարովի, այսինքն՝ երբ վերցնեք ձեր ապրանքը Wildberries-ից եւ ցանկանաք այն տոպրակի մեջ դնել, ապա տոպրակը կարժենա 22-ից 65 դրամ:

Պոլիէթիլենային տոպրակների համար գումարը գանձվելու է Wildberries-ի ձեր հաշվին կցված քարտից:

Ըստ երեւույթին, սա արվում է, քանի որ Wildberries-ը հանդիսանում է Հայաստանի 1000 խոշոր հարկատուներից մեկը եւ ստիպված պետք է ենթարկվի պոլիէթիլենային տոպրակների մասին հայաստանյան օրենքին, ըստ որի՝ տոպրակները հաճախորդներին տրվելու են որոշակի գումարի դիմաց: Այդ գումարն էլ իր հերթին ազդեցություն է ունենալու Հայաստանի բյուջե մտնող գումարի չափի վրա: Կարող ենք սպասել նաեւ, որ հաջորդ եռամսյակում Wildberries-ը հարկատուների ցանկում ավելի բարձր դիրքում կհայտնվի:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

«ՌՈԶԱԼԻ»-Ի ՊՐԵՄԻԵՐԱՆ ԿԱՅԱՑԱՎ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հոկտեմբերի 26-ից էկրաններին կհայտնվի «Ռոզալի» ռոմանտիկ կատակերգությունը: Ֆիլմի այուժեն կառուցված է արհեստական բանականության հիման վրա: Հայաստանյան գաղտնի լաբորատորիաներից մեկում գիտնականները կարողանում են ստեղծել յուրօրինակ կին-ռոբոտ: Ռոզալին աչքի է ընկնում ոչ միայն հզոր արհեստական բանականությամբ, այլեւ նրանում ինտեգրված են սինթետիկ հորմոններ, որոնց շնորհիվ կարողանում է մտածել ու զգալ իրական մարդու պես: Սա աննախադեպ ձեռքբերում է նանոտեխնոլոգիաների ոլորտում: Բայց որպեսզի Ռոզալին «մարդ դառնա», պիտի ունենա մարդուն բնորոշ բոլոր զգացմունքները՝ սեր, խանդ, կիրք, երջանկություն, ատելություն ու կարոտ: Ռոբոտի փորձարկման վերջին փուլին համաձայնում է մասնակցել պարտքերի մեջ խրված ու սեփական սերի մեջ խճճված մի երիտասարդ: Եվ եթե «բանական» ռոբոտը կարող է սիրահարվել սովորական մարդուն, ապա անուղղելի սախոսն ու խարդախը սիրահարվելով կարող է դառնալ իսկական հերոս:



«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ֆիլմի պրեմիերան կայացել է յուրօրինակ մթնոլորտում, կապույտ գորգ՝ կարմիրի փոխարեն, փակ ցուցադրություն եւ հայտնի դեմքեր:

Կապույտ գորգի բացումն արել են գլխավոր հերոսներին մարմնավորող Տարոն Իսպիրյանը՝ Պոնչը, եւ Նաստասյա Գոլովկոն: Կապույտ գորգին նաեւ ներկա էին մի շարք հայ հայտնիներ, ռեժիսորներ, սցենարիստներ, պրոդյուսերներ եւ ոլորտի մի շարք այլ ներկայացուցիչներ:

Նախագծի բեմադրող ռեժիսոր Դավիթ Բաբախանյանը լրագրողների հետ զրույցում նշեց, որ ֆիլմ ստեղծելիս միշտ մտածում են ստեղծել մի բան, որը նախկինում չի արվել, իսկ հետագայում այդ մտքի շուրջ կհավաքվեն համախոհներ:

«Ֆիլմի հիմնական սպառողները երիտասարդներն են, որոնց թեման հետաքքիր է, բայց կարծում ենք, որ սիրո եւ ազնիվ արժեքների թեման արդիական է ցանկացած սերնդի համար: Մեր ֆիլմն ունի կարեւոր գաղափար՝ «դարձե՛ք մարդ», քանի որ մեր ռոբոտը մարդկայնանում է՝ ձեռք բերելով մարդկային արժեքներ»,- նշեց Դավիթ Բաբախանյանը:

Խոսելով գլխավոր դերակատարի՝ Տարոն Իսպիրյանի մասին՝ պրոդյուսեր Արման Միտոյանը նշեց. «Մենք վստահ էինք, որ այս հումորային ժանրում Պոնչը կկարողանա իրեն դրսեւորել, քանի որ Պոնչը թե՛ շնորհալի երիտասարդ է, թե՛ սիրված դերասան: Պոնչը մարմնավորում է երիտասարդի, որի մարդկային կերպարանափոխությունն ավելի ակնառու է, քան ռոբոտի կերպարանափոխությունը մարդուն: Նաստասյայի դեպքում մեզ պետք էր դերասանուհին, որին կկարողանայինք կերպարանափոխել, եւ հանդիսատեսը տեսնելու է, թե ինչքան տարբեր կերպարներում է ներկայանալու նա»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ ԱՄՈՒՍՆԱՑԱՎ ⇨

Բլոգեր, դերասանուհի Արաքսյա Խաչատրյանը, որը հանրությանը հայտնի դարձավ հատկապես «Հատուկ դասարան» հեռուստանախագծում մարմնավորած Օլյայի կերպարով, ամուսնացել է: Արաքսյայի ընտրյալը Կարուշ Հովհաննիսյանն է: Պսակադրությունը տեղի է ունեցել Հառիճավանքում:

Տոնական երեկոյին ներկա են եղել նորապսակների ընկերները, հարազատները՝ Մերի Քբչարյանը, Բորիս Մելքոնյանը, Հրանտ Հովսեփյանը, Հայկ Դարբինյանը եւ այլք:

ՋՈՒԳԵՐԳ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ

Սարգիս Եղիազարյանն ու Արմինկան համատեղ երգ ու տեսահոլովակ կներկայացնեն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արմինկայի հետ զուգերգի միտք շատ վաղուց է եղել, բայց թե կոնկրետ ինչ երգ, անհայտ է եղել:

Ի վերջո, ընտրվել է Արմինկայի երգացանկից «Մի թող ինձ մենակ» երգը, որը

շատ-շատերին իրենց երիտասարդությունն է հիշեցնում եւ նոր մատուցմամբ կհրամցվի հանդիսատեսին:

Երաժշտության հեղինակը Աշոտ Ղազարյանի որդին է՝ Արման Ղազարյանը, որը բավականին ուրախացել է, երբ իմացել է, որ հենց այս երգին է նոր շունչ հաղորդվելու: Նոր գործիքավորման հեղինակը Գուրո Գասպարյանն է, որը եւս մեծ պատասխանատվությամբ է մոտեցել իր գործին՝ ստանալով հետաքրքիր արդյունք:

Երգի հիման վրա նկարահանվում է տեսահոլովակ, որի կեսն արդեն պատրաստ է:

Չկա սիրո պատմություն, չկան բարդագույն տեսարաններ. երգիչները տեսահոլովակում մարմնավորում են հենց իրենց՝ որպես երգչի:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Սարգիս Եղիազարյանը ընդգծում է՝ իր համար պատիվ է Արմինկայի հետ զուգերգ ներկայացնելը: «Ինձ համար կրկնակի պատասխանատվություն է ներկայանալ մի երգով, որը ժամանակին հիթ է եղել: Խնդիր էր դրված, որ արդեն իսկ մեծ պատասխանատվությամբ աշխատած երգը ներկայացնել նոր շնչով ու մոտեցմամբ:

Շնորհակալ եմ Արմինկային համագործակցությանը համաձայնվելու եւ այս երգի ընտրության համար, քանի որ այն նաեւ իմ պատանի տարիների հիթն է, եւ ինձ համար մեծ պատիվ է Արմինկայի հետ ներկայանալը»,- եզրափակեց Սարգիսը:

Մ. ՂԱՋԱՐՅԱՆ

ՍՊՈՐՏ

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԸ ՀԱՂԹԵՑ

Մեծ Բրիտանիայի Մեն կղզում շարունակվում է ՖԻԴԵ-ի «Գրանդ Սվիս» մրցաշարը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Հայաստանը ներկայացնող շախմատիստներից 5-րդ տուրում Հրանտ Մելքումյանը, Շանթ Սարգսյանը, Մանուել Պետրոսյանը, Գաբրիել Սարգսյանը ոչ-ոքի են ավարտել պարտիաները, Հայկ Մարտիրոսյանը պարտություն է կրել, իսկ Սամվել Տեր-Սահակյանը հաղթանակ է տոնել:

Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի նախկին առաջատար, այժմ ԱՄՆ դրոշի ներքո հանդես եկող Լեւոն Արոնյանը կիսել է միավորը:

Կանանց մրցաշարում Էլինա Դանիելյանը հաղթել է, Մարիամ Մկրտչյանը ոչ-ոքի է ավարտել պարտիան:

Հիշեցնենք, որ ՖԻԴԵ-ի «Գրանդ Սվիս» մրցաշարը մեկնարկել է հոկտեմբերի 25-ին եւ կեզրափակվի նոյեմբերի 11-ին: Մրցաշարը բաղկացած է 11 տուրից եւ անցկացվում է շվեյցարական մրցակարգով: Մրցաշարի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է 460 հազար դոլար, առաջին հորիզոնականը զբաղեցրած շախմատիստը կստանա 80 հազար դոլար: Կանանց եւ տղամարդկանց մրցաշարում 1-ին եւ 2-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստները իրավունք են ստանում մասնակցելու 2024 թվականի հավակնորդների մրցաշարին:

ՀԱՂԹԱՆԱԿ ՏՈՆԵՑԻՆ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 14-րդ տուրի շրջանակներում կայացավ եւս երկու հանդիպում:

Մրցաշարային աղյուսակի առաջատար «Փյունիկ»-ը մրցեց «Վեստ Արմենիա»-ի հետ եւ առավելության հասավ 2:3 հաշվով: «Փյունիկ»-ի կազմում գոլերը խփեցին Սեմ Հենդրիկսը, Հովհաննես Հարությունյանը եւ Ջեյմս Սանտոսը, իսկ «Վեստ Արմենիա»-ից՝ Անդրե Մենսալառն ու Ջախար Տարասենկոն:

Օրվա մյուս խաղում «Արարատ»-ը զիջեց ԲԿՄԱ-ին: «Բանակայիններին» հաջողվեց երկու անպատասխան գնդակ ուղարկել «Արարատ»-ի դարպասը. գոլերը խփեցին Արգիշտի Պետրոսյանը եւ Նարեկ Ալավերդյանը:

Այս տուրի շրջանակներում կկայանան նաեւ «Նոա»-«Ալաշկերտ», «Ուրարտու»-«Շիրակ» խաղերը:

ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՄՈԴՐԻՉԻՆ

Մադրիդի «Ռեալի» նորեկ, 20-ամյա անգլիացի կիսապաշտպան Ջուդ Բելինգեմը շնորհավորել է 38-ամյա խորվաթ կիսապաշտպան Լուկա Մոդրիչին Արքայական ակումբում 500 հանդիպում անցկացնելու կապակցությամբ:

«500 հանդիպում. ինչպիսի՜ նվաճում: Լեգենդ, միշտ հաճելի է»,- գրել է Բելինգելը սոցիալական ցանցերում:

Մոդրիչի 500-րդ խաղում «Ռեալը» Բելինգեմի դուբլի շնորհիվ 2:1 հաշվով հաղթել էր «Բարսելոնային»:

Մոդրիչը «Ռեալում» է հանդես գալիս 2012 թվականից: Նրա պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2024թ. հունիս:

● *Նոյեմբերի 1-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Խենթը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որ դեպքում կարող է անձը ստանալ անժամկետ հաշմանդամության խումբ:
Կարինե Պետրոյան (56 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կ. Պետրոսյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ հաշմանդամության խումբը սահմանվում է անժամկետ՝

ա) օրենքով տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց,

բ) վերականգնողական միջոցառումների հեռանկարի բացակայության, հաշմանդամի սոցիալական անբավարարության վերացման կամ նվազեցման անհնարինության դեպքերում, որոնք հետևանք են անատոմիական արատով կամ անդառնալի կառուցվածքային փոփոխություններով կամ օրգանիզմի օրգանների կամ օրգան-համակարգերի ֆունկցիաների խանգարումով առողջության խաթարմամբ պայմանավորված կենսագործունեության կայուն սահմանափակման,

գ) իրականացված վերականգնողական միջոցառումների անարդյունավետության դեպքում, որը բերում է հաշմանդամի մշտական սոցիալական պաշտպանության անհրաժեշտության (առնվազն 7 տարվա ընթացքում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների դիտման պայմաններում, իսկ 2 եւ 4 տարի դիտման պայմաններում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշման NN 2 եւ 3 հավելվածների),

դ) մեկ ակնագնդի կամ մեկ աչքի տեսողության անվերադարձ բացակայության դեպքում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ 1-ին խմբի հաշմանդամությունը սահմանվում է երկու տարի ժամկետով, 2-րդ եւ 3-րդ խմբերի հաշմանդամությունը՝ մեկ տարի ժամկետով, իսկ «Հաշմանդամ երեխա» կարգավիճակը՝ երկու տարի ժամկետով կամ մինչեւ 18 տարին լրանալը:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպիսի տուգանքներ են նախատեսված արտադրական վտանգավոր օբյեկտը ռեեստրում գրանցման չներկայացնելու եւ տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելու համար:
Իննա Աբելյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտը ռեեստրում գրանցման չներկայացնելն ու տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելն առաջացնում են տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով (այսինքն՝ մեկ միլիոն դրամ):

ՀՀ ներքին գործերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերը նախապես համաձայնեցվում են պետական հրդեհային հսկողության մարմինների հետ: Հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերով չսահմանված, հրդեհային անվտանգության ապահովման առանձին լուծումներ պահանջող հարցերի վերաբերյալ եզրակացություններ է տալիս պետական հրդեհային հսկողություն իրականացնող մարմինը (այն է՝ ՀՀ ՆԳՆ ԱԻ պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչությունը):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմին ահազանգ էր ստացվել, որ Գեղարքունիքի մարզի Մարտունի բնակավայրում նկատվել է հյուծված գիշատիչ թռչուն:

ԲԸՏՄ Գեղարքունիքի տեսուչները պարզել են, որ թռչունը հանդիսանում է ՀՀ Կարմիր գրքում եւ Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում ընդգրկված հազվագյուտ տեսակի սեւ անգղի առանձնյակ (լատ.՝Aegypius monachus), որն անմիջապես տեղափոխվել է Երեւան՝ կենդանիների եւ թռչունների համար նախատեսված վերականգնողական կենտրոն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 4 + 8 +11 + 16
Կոտայքի լեռներ	+ 4 + 8 +10 + 14
Կոտայքի նախալեռներ	+ 9 + 11 +17 + 20
Գեղարքունիք	+ 3 + 7 + 8 + 13
Լոռի	+ 8 + 13 +18 + 23
Տավուշ	+ 10 + 15 +20 + 25
Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 9 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 10 + 18 + 21

Արարատ	+ 9 + 12 +22 + 24
Արմավիր	+ 8 + 10 +21 + 23
Վայոց ձորի լեռներ	+ 4 + 6 +12+ 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11 +21 + 23
Սյունիքի հովիտներ	+14+ 18 +21 + 25
Սյունիքի նախալեռներ	+ 7 + 12 +17 + 21
ԼՂՀ	+ 13 + 17 +21 + 25
Երեւան	+11+ 13 +20 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.10.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*